

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՆԻԷՐ ՀԱՅԱՍՏ. ՀԱՆՐ. ԳՐԱԳԱՐԱՆԻՆ

Ամերիկայի Շիքագո քաղաքում ապրող Աստիկ Տէվէնեանը Հայաստանի Հանրային Գրադարանին նւիրել է իր 40,000 գրքից բաղկացած հարուստ գրադարանը, որ արդէն ստացել է Երեւանում: Գրադարանը կազմել է 25 տարւայ ընթացքում եւ, ի միջի այլոց, բովանդակում է նոյն հաւաքածուներ արեւմտահայ գրականութիւնից, ինչպէս նաեւ հագուազիտ հրատարակութիւններ: Հայաստանի Հանր. Գրադարանում յատուկ սեփեակ է յատկացւած Տէվէնեանի նւիրած գրքերի համար:

ՈՆ. ԱՆՈՓԵԱՆԻ ԵՐԿԵՐԸ

Մեզ հաղորդում են, որ Հայաստանի Պետկրատը որոշել է հրատարակել հանգուցեալ բանաստեղծ Ոնոփրիոս Անոփեանի երկերի ժողովածուն, որի կազմութիւնն ու խմբագրութիւնը յանձնւած է բանաստեղծ Սիմ. Բաբիեանին: Արդէն հաւաքւած են Անոփեանի տպւած եւ անտիպ բանաստեղծութիւնները եւ յանձնւած արտագրութեան: Բնագրի համեմատութիւնից յետոյ, պիտի կազմւի հատորը, որին կցւելու է եւ բանաստեղծի կենսագրութիւնը:

ԽԱԶ. ԱՐՈՎՆԱՆԻ ՄԱՍԻՆ

Մասկւայում, «Նշամառը Մարդկանց կեանքը» մատենաշարում, յոյս է տեսել վ. վահանեանի ռուսերէն ընդարձակ աշխատութիւնը «ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎՆԱՆ» վերնագրով: Հատորը բաղկացած է 320 էջից եւ պատկերազարդ է: Յաւելւածում առաջ են բերւած «Հայկական Օրագրու-

քիւն» հանդէսի մասին փաստաթղթեր՝ հանւած կազանի համալսարանի դիւանից: Գրքին կցւած են հարուստ ծանօթութիւններ եւ մատենագրական ցանկ Արովեանի մասին:

ԵՐԳԻԾԱԹԵՐԹ ԵՐ ԵՒԱՆՈՒՄ

Հակառակ «գրական պրոդուկցիա»-ի ֆանակական զգալի վերելքի, Հայաստանում մինչեւ այժմ էլ չեն կարողանում ստեղծել քիչ շատ լուրջ երգիծաբերք: Մի ժամանակ Երեւանում հրատարակուում էր «Ձուռնա» երգիծաբերքը, նըրան յաջորդեց, «Կարմիր Մոծուկ»-ը: Սրա մահից յետոյ, Թիֆլիսում ծնունդ առաւ «Կարիճ»-ը, բայց նոյնպէս շուտով խափանեց: Այս բոլոր ձեռնարկներն էլ, ընդհանուր առմամբ, անարիւն եւ խեղճ բաներ էին: Վերջին ֆանի տարիները, սակայն, այդ էլ չկայ. հորհրդ. Միութեան ամբողջ տարածութեան վրա մէկ հատիկ հայերէն երգիծաբերք գոյութիւն չունի:

Այժմ Երեւանում ուզում են լրացնել այդ պակասը. որոշւած է յունւ. 1-ից հրատարակել «Եղիցեջ» անունով մի երգիծաբերք, որին պիտի աշխատակցեն հենրից Լեւ-Կամսար, Փալանդուզ Մկօ, Դ. Գեմիբեան, Ստ. Զօրեան եւ ուրիշներ, մի շարք երիտասարդ երգիծարաններ, ինչպէս Եդ. հաջիկ, այլեւ Արուտչեան Եղբայրներ, Դանչօ եւ ուրիշ նըկարիչներ:

Թէ որքան յաջող եւ տեսական կը լինի «Եղիցեջ»-ը, ցոյց կը տայ ապագան: Պէտք է նկատել, սակայն, որ երգիծաբերքի գոյութեան եւ զարգացման երկու հիմնական պայմանն էլ պակասում

են երևանում - ազատ միջավայր, այսինքն խօսքի ազատութիւն, եւ հանդուրժող ոգի իշխանաւորների մէջ:

Եթէ «Կրօնորդի»-ը Մոսկւայում, կամ «Նեանդիդ»-ն Թիֆլիսում որոշ յաջողութիւն ունեն, գլխաւոր պատճառը այն է, որ ռուս ու վրացի բոլշեւիկները մտնով աւելի բարձր են ու աւելի լայնսիրտ, քան երևանցիները:

ՍՍՍՈՒՆՅԻ ԴԱԻԹ

Հայպետերաւոր ձեռնարկել է «Մասուհցի Դաւիթ» երկհատոր մեծ ժողովածուի հրատարակութեան: Ժողովածուի մէջ մտնելու է ժողովրդական վէպի մօտ 60 տարբերակ (վարիանտ): Առաջին հատորը բաղկանալու է մօտ 1000 էջից եւ ընդգրկելու է 40 տարբերակ, որոնցից շատերը գրի են առնւած վերջին տարիները եւ լոյս են տեսնելու առաջին անգամ: Բոլոր տարբերակներին կցւած են յառաջաբաններ եւ ծանօթութիւններ: Ժողովածուն խմբագրւել է ու տպագրութեան պատրաստել է պրոֆ. Ման. Աբեղեանը: Արտաքին ձեւաւորումն ու պատկերազարդումը կատարել է նկարիչ Յակ. Կոջոյեանը:

«ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒ

Յունաբրին լրանում է վառ. Տերեանի ծննդեան յիսնամեակը եւ մահւան 15 ամեակը: Այդ առթիւ երևանում պատրաստում է մի ժողովածու, որ նոր նիւթեր է բովանդակելու բանաստեղծի կեանքի եւ ստեղծագործութեան մասին: Ի միջի այլոց, պատրաստւած են «էջեր Վ. Տերեանի յեղափոխական գործունեութիւնից»՝ Մոսկւայի դիւանական վաւերագրերի հիման վրա: Ժողովածուի մէջ մտնելու են Ն. Մառի մէկ յօդուածը՝ «Իմ ուսանող վառան Տերեանի մասին», պրոֆ. Ի. Օրբելու յիշողութիւնները, Վ. Վահանեանի գրի առած տեղեկութիւնները Վ. Տերեանի գործունեութեան մասին հոկտեմբերեան յեղա-

շրջման օրերին Պետրոգրատում եւ Մասկւայում, Ա. Շահիջանեան - Տերեանի գրութիւնը՝ «Տերեանի վերջին ուղեւորութիւնը», Բանաստեղծի աւագ եղբայր Զաւախեցու յուշերը եւայլն: Բովանդակութիւնից դատելով՝ ժողովածուն պէտք է լինի հետաքրքրական, նոր տեսլանքով հարուստ վաղամեա բանաստեղծի կեանքի եւ ստեղծագործութեան լուսաբանութեան համար:

ՄԵԼՔՈՆԵԱՆ ՖՈՆԴ

Մելիքեան ֆոնդի 1935 թ. հրատարակութիւնների համար նախատեսւած է 125,000 ռուբլի: Արդէն տպագրութեան է յանձնւած 10 հատոր գիրք, որոնց թըւում՝ Յակոբեանի «Ուղեգրութեան» 2րդ հատորը, Ե. Շահաղիկի «Եւաչ. Արովեսանի Դիւանը», Յ. Մանասեղեանի «Հայաստանի հին նարտարապետները», Ն. Սամէլեանի «Հին Հայաստանի Կուլտուրան», 3-րդ հատոր, պրոֆ. Զավախիչ-Վիլու «Նիւթեր Հայաստանի Սոցիալական Պատմութեան վերաբերելու», պրոֆ. Յ. Օրբելու «Հայաստանի Արեւստի պատմութիւնը», Գ. Սիմոնեանի «Միֆ. Նալբանդեան» եւայլն: Տպագրւած պատրաստ են եւ շուտով լոյս կը տեսնեն պրոֆ. Մելիքեանի Բէկի «Վրաց ազգիւրները հայերի եւ Հայաստանի մասին», Գ. Լեւոնեանի «Հայաստանի Պարբերական մամուլի սկզբից մինչեւ այժմ», հանգուցեալ Սոյ. Մելիքեանի «Հայաստանի երաժշտութեան պատմութիւնը», Ալի. Քալանթարի «Վաղարշապատի պեղումները», Հր. Աճառեանի «Արմատական Բառարանի յաւելածը» եւայլն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Բուրբէշում կազմւած է հրատարակչական անանուն մի ընկերութիւն - «Մասիս» - 500,000 լէյ դրամազլովով: Ընկերութեան նպատակն է հրատարակել հայերէն լեզուով գրքեր կամ օտար լեզուներով հայերի մասին աշխատու-